## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր նորանշանակ դեսպան Ռայներ Մորելին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը շնորհավորեց դեսպանին նշանակման առիթով՝ մաղթելով արդյունավետ աշխատանք: Նորին Սրբությունը նաեւ գոհունակությամբ անդրադարձավ հայ-գերմանական հարաբերություններին, դրանց ամրապնդմանն ուղղված դեսպանատան ջանքերին, ինչպես նաեւ Մայր Աթոռի եւ դեսպանատան միջեւ սերտ կապերին:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Հայ Եկեղեցու համագործակցությունը Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցու, ավետարանական հարանվանությունների եւ քրիստոնեական կազմակերպությունների հետ ընկերային եւ կրթական տարբեր ծրագրերում՝ տեղեկացնելով, որ այդ շրջանակներում վերջին տարիներին Մայր Աթոռի վեց միաբաններ իրենց կրթությունը շարունակել են Գերմանիայի բարձրագույն կրթական հաստատություններում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց տարածաշրջանում խաղաղության պահպանման, ինչպես նաեւ առկա խնդիրների հաղթահարման գործում հոգեւոր առաջնորդների կարեւոր դերակատարությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՔԻ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրաքի փոխվարչապետ Ռաուշ Նուրի Շաուեյսի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Սերգեյ Մանասարյանի:

Նորին Սրբությունը, ողջունելով Իրաքի փոխվարչապետի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ընդգծեց երկու ժողովուրդների միջեւ պատմական խոր արմատներ ունեցող բարեկամական հարաբերությունները, որոնք մշտապես հատկանշված են եղել ջերմությամբ, փոխըմբռնման ու համագործակցության ոգով: Ամենայն Հայոց Հայրապետն այս առնչությամբ գոհունակություն հայտնեց, որ համահունչ այդ բարեկամությանը երկու